ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03

N << ՀՀՏՄ-ԳՀԾՁԲ-26/02>> ԾԱԾԿԱԳՐՈՎ ԿԱՅՔԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ

ք. Իջևան << 11 >> ՄԱՅԻՍԻ 2026թ.

Ժամը 10:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝ ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ՝ Թերեզա Սաֆարյան

Անդամներ՝

ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ՝ Վալեր Օրդյան

ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ՝ Գարիկ Մելքումյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ՝ Ա.Մանգասարյան

« ՀՀՏՄ-ԳՀԾՁԲ-26/02» ծածկագրով հրավերի (այսուհետ՝ Հրավեր) մրցույթի թիվ 02 արձանագրությամբ մասնակիցներին տրվել էր մեկ աշխատանքային օր թերի փաստաթղթերի շտկում ներկայացնելու համար:

1. **Տվյալներ մասնակիցների կողմից ներկայացրած Հրավերով պահանջվող ներկայացված շտկված փաստաթղթերի գնահատման վերաբերյալ.**

1.1 ՌՍՍ ԱՌՄ ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկումը ''Մասնագիտական փորձառություն'' որակավորման չափանիշի մասով գնահատվում է անբավարար, քանի որ ''Մասնավորապես մասնակիցը ներկայացրել է Հրավերի 2.4 կետի 1-ին բաժնով պահանջվող ''Մասնագիտական փորձառություն'' որակավորման չափանիշով պահանջվող նախկինում կատարված պայմանագրի պատճեն, որի շրջանակում մատուցված ծառայության ծավալը գումարային արտահայտությամբ պակաս է հայտով առաջարկած գնի 50 տոկոսից: Բացի դրանից տվյալ պայմանագրի պատշաճ կատարումն ապահովող փաստաթղթերը վավերացվել են շտկման պահանջ ներկայացվելուց հետո, հարկային հաշիվը ևս e-invoice ծրագրում հրապարակվել է շտկում պահանջելուց հետո, այս ամենը վկայում է այն մասին, որ մասնակիցը Հրավերի, մեջբերում՝ ''*Մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող հինգ տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի վեբ կայքերի սպասարկման ծառայությունների մատուցման առնվազն մեկ պայմանագիր*'' պահանջը չի բավարարել և փաստացի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ավարտված, ընդունված պայմանագիր չի ունեցել: Հրավերով հստակ սահմանված է, մեջբերում՝ '' *բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ*

պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:'' ''Աշխատանքային ռեսուրսներ'' որակավորման չափանիշով ներկայացված շտկված փաստաթղթերը գնահատվում են բավարար:

1.2 Վահե Կարապետյան ԱՁ-ի կողմից ներկայացված շտկումը ''Մասնագիտական փորձառություն'' որակավորման չափանիշի մասով գնահատվում է անբավարար, մասնակիցը ներկայացրել է միայն հարկային հաշիվ, որի գումարը չի բավարարում հայտով ներկայացված պայմանագրի գումարին, ինչը նշանակում է, որ տվյալ պայմանագիրն ավարտված չէ ամբողջական կտրվածքով, այլ միայն պայմանագրի մի մասն է իրականացված, նույնիսկ այդ մասի հանձնման-ընդունման արձանագրությունը բացակայում է:

1.3 ՎԵՔԹՈ ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկումը ''Մասնագիտական փորձառություն'' որակավորման չափանիշի մասով գնահատվում է անբավարար, մասնակիցը չի ներկայացրել շտկված փաստաթղթեր: ''Աշխատանքային ռեսուրսներ'' որակավորման չափանիշի մասով գնահատվում է անբավարար, մասնակիցը ներկայացրել է միայն գրավոր համաձայնություն:

Ելնելով գնումների օրենսդրության պահանջներից և հայտերի գնահատման արդյունքներից ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի կարիքների համար կազմակերպված « ՀՀՏՄ-ԳՀԾՁԲ-26/02» ծածկագրով "ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքէջի արդիականացման" ծառայության ձեռքբերման մրցույթի գնահատող հանձնաժողովն ընդունեց հետևյալ որոշումները.

1. Մերժել ՌՍՍ ԱՌՄ ՍՊԸ-ի, Վահե Կարապետյան ԱՁ-ի և ՎԵՔԹՈ ՍՊԸ-ի հայտերը, ընտրված մասնակից համարել Բիոնկոդ ՍՊԸ-ին՝ որպես ոչ գնային պահանջները բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, մյուս մասնակիցը համարվում է չընտրված:
2. Պայմանագիր կնքելու ծանուցումը հրապարակել գնումների պաշտոնական տեղեկագրում:
3. Անգործության ժամկետի ավարտից հետո չորրորդ աշխատանքային օրը Բիոնկոդ ՍՊԸ-ին ծանուցել պայմանագիր կնքելու մասին:
4. Սույն արձանագրությունը տրամադրել բոլոր մասնակիցներին և պատճենը հրապարակել գնումների կայքում:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

Հանձնաժողովի նախագահ՝ Թ. Սաֆարյան

Հանձնաժողովի անդամներ՝ Վ.Օրդյան

Գ. Մելքումյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մանգասարյան